


ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

**2014 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների և  
2015 թվականի հունվար-մարտ ամիսների  
իրավախորհրդատվության շրջանակներում  
բացահայտված խնդիրների վերաբերյալ**

Տեղեկանքը պատրաստվել է իրավախորհրդատու  
Անի Աղազյուլյանի և Հայկուհի Հարությունյանի կողմից





ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL  
ORGANIZATION

## Բովանդակություն

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>3</b>
<b>1 ԱՐԴԱՐԱՑԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ.....</b>	<b>4</b>
1.1 ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ և ԳՈՐԾԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՐԵՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....	4
<b>2 ԱՆՁԻՆ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՄԱՍՈՎ.....</b>	<b>5</b>
<b>3 ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ .....</b>	<b>7</b>
3.1 ԽՆԴԻՐ 1 .....	8
ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՏՈՒԺՈՂԻ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ .....	8
3.2 ԽՆԴԻՐ 2 ՎՃՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՆՀԱՐԻՆՈՒԹՅՈՒՆ .....	9
<b>4 ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ.....</b>	<b>10</b>
<b>5 ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ/ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....</b>	<b>11</b>
5.1 ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ/ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ .....	12
5.2 ԵՐԵԽԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՈՒԹՅՈՒՆ ԶՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍՈՎ.....	12
5.3 ՉԱՓԱՀԱՍ ԱՆՁԻՆ ԾՆԱԴՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍՈՎ.....	13
5.4 ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ .....	13
5.4.1 <i>Խնդիր 1</i> .....	14
5.4.2 <i>Խնդիր 2</i> .....	16
5.4.3 <i>Խնդիր 3</i> .....	16
5.5 ՕՐԵՆՔԻ ՍԽԱԼ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՄԱՍՈՎ.....	16
5.6 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍՈՎ.....	17
5.7 ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ .....	17



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL  
ORGANIZATION

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը շարունակում է քաղաքացիներին տրամադրել անվճար իրավաբանական խորհրդատվություն: Սույն հաշվետվությունը ներառում է բացահայտված համակարգային խնդիրները, իրավախորհրդատվության արդյունքները, մասնավորապես՝ ավարտված գործերի քանակը և նրանց արդյունքները:

Կազմակերպությունը խորհրդատվություն տրամադրում է բանավոր կարգով, ինչը ներառում է նաև էլեկտրոնային փոստով և հեռախոսով հասցեագրված հարցերին պատասխանելը:

Իրավունքի խախտումներին առնչվող հարցերի դեպքերում պատրաստվում են քրեական, քաղաքացիական և վարչական գործերով դիմումներ, բողոքներ (այդ թվում նաև հանցագործության մասին հաղորդումներ), հայցադիմումներ՝ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ:

Առանձին դեպքերում իրականացվում է նաև դատական ներկայացուցչություն դատարաններում և այլ պետական մարմիններում: Այս հաշվետվության մեջ ներառված են քանակական և որակյալ տվյալներ այն դեպքերի վերաբերյալ, երբ կազմակերպությունն ուղղակիորեն ներգրավվել է գործի քննության մեջ կամ երբ վերջինիս գործով բացահայտվել են համակարգային խնդիրներ:

Իրավախորհրդատվության դիմած քաղաքացիների խնդիրները գրանցվել են ըստ քաղաքացիական, քրեական և վարչական իրավունքի ոլորտների և դասակարգվել ըստ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի հոդվածների:

Այս հաշվետվության մեջ առաջին անգամ ներառվել է նաև ԵՄ Կանոնադրությամբ սահմանված լավ/արդյունավետ կառավարման իրավունքի վերաբերյալ ՀՀ-ում առկա խնդիրները, որոնք ևս բացահայտվել են իրավախորհրդատվության շրջանակներում:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL  
ORGANIZATION

**1 Արդարացի դատաքննության իրավունքը**

**1.1 Դատարանում ներկայացուցչի միջոցով հանդես գալու և գործի հրապարակայնորեն քննության իրավունք**

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը որևէ սահմանափակումներ չի նախատեսում քրեական դատավարությունում որպես բողոք բերող անձի ներկայացուցչի փաստաբան չհանդիսացող անձանց հանդես գալու համար: Ավելին, ՀՀ Սահմանադրական դատարանն իր՝ 18.10.2006թ. ՄԴՈ-652 որոշման համաձայն՝ քրեական դատավարությունում քրեական հետապնդում իրականացնող մարմնի դեմ բողոք բերող անձը («դիմողը», կամ ըստ Քր. դատ. օր-ի 290-րդ հոդվածի 1-ին մասի, «այլ անձինք, ում իրավունքները խախտվել են [...]») նույնպես հանդիսանում է քրեական դատավարության մասնակից և նույնպես պետք է հնարավորություն ունենա օգտվելու ներկայացուցչի ունենալու իրավունքից: ՀՀ օրնադրությամբ փաստացի արգելված չէ, որ դիմողի ներկայացուցչի չի կարող լինել այլ անձը, բացի փաստաբանից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանափակ են այն դեպքերը, երբ անձը կարող է բողոքի քննությունը անց կացնել դռնփակ: Ընդ որում, այդ բոլոր դեպքերում էլ դատարանը պետք է կայացնի որոշում:

Չնայած այս օրենսդրական կարգավորումներին՝ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավար Նաիրա Գրիգորյանը քրեական դատավարության շրջանակներում «Քրեական գործի հարուցումը մերժելու մասին» որոշման դեմ ներկայացված բողոքի քննությանն արգելել է որպես ներկայացուցչի հանդես գալ փաստաբան չհանդիսացող անձին:

Բացի այդ, դատարանն առանց համապատասխան որոշում կայացնելու և կողմերի միջնորդության, «Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման» դեմ ներկայացված բողոքի քննությունն իրականացրել է դռնփակ դատական նիստի շրջանակներում՝ արգելելով այլ անձնաց մասնակցել դատական նիստին:

Նշված խախտումների հիմքով կազմակերպության կողմից ներկայացվել է Վերաքննիչ բողոք, և ՀՀ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ դատարանը խախտել է ՀՀ սահմանադրության 18-րդ և Կոնվենցիայի 6-րդ հոդվածները:



## 2 Դատարանի մատչելիությունը դատական ակտի բողոքարկման ժամկետների մատչելիության տեսանկյունից

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն արձանագրել է, որ «դատարանի իրավունքը», ներառյալ դատարանի մատչելիության իրավունքը, ենթակա է սահմանափակումների: Սակայն, այդ սահմանափակումները չպետք է անձի դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակեն կամ նվազեցնեն այն կերպ կամ այն չափով, որ խախտվի իրավունքի բուն էությունը<sup>1</sup>: Այս սահմանափակումը տարածվում է նաև ստորադաս դատարանների դատական կատերի բողոքարկման համար ժամկետների բացթողնման դեպքերի վրա, երբ ժամկետները բաց են թողնվել ստորդաս դատարանների կողմից դատական ակտերը կողմին օրենքով սահմանված ժամկետից ավելի ուշ հասանելի դարձնելու հետևանքով:

ՀՀ Սահմանադրական դատարանը, իր ՀՀ ՄԴՈ-1052 որոշմամբ արձանագրել է, որ բողոքարկվող դատական ակտի փաստացի ուշ ստանալու հիմքով բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջնորդություն ներկայացնելու դեպքում դատարաններին լայն հայեցողական լիազորության տրամադրումը հիմնավոր չէ: Այս հիմքով էլ ՀՀ Սահմանադրական դատարանը ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը և իրավունքի ուժով (*ex jure*) չի ճանաչվում հարգելի:

Չնայած այս հանգամանքին՝ պրակտիկայում վերադաս դատարանները մերժում են բողոքի ընդունելիությունն այն դեպքում, երբ քրեդատավարական օրենքով սահմանված ժամկետները բաց են թողնվել ստորդաս դատարանի կողմից կայացված դատական ակտն ավելի ուշ ստանալու հետևանքով:

Քաղաքացու կողմից ՀՀ վճռաբեկ դատարան ներկայցված բողոք թողնվել է առանց քննության այն հիմքով, որ այն ներկայցված է եղել օրենքով սահմանված ժամկետից հետո: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վերաքնիչ դատարանը դատավճիռն ուղարկել է կողմին ոչ թե օրենքով սահմանված երեք օրվա ընթացքում, այլ դատավճռի եզրափակիչ մասը հրապարակելուց 16 օր հետո:

<sup>1</sup> Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի, Գանազատ թիվ 25083/05, 04 հոկտեմբերի, 2010



### 3 Անձին անօրինական ազատությունից զրկելու մասով

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հարկադիր բուժումը

“...Կոնվենցիայի 5.1(ե) ներքո անձին ազատազրկելը նպատակ է հետապնդում 5.1(ե) կետի ներքո անձանց տրամադրել բժշկական խնամք կամ պայմանավորված է հասարակական/սոցիալական քաղաքականությամբ, կամ երկուսը միասին...” (Gorshkov v. Ukraine, no 67531/01 08 փետրվարի, 2006թ., կետ 37): “...Կոնվենցիայի 5.1(ե) ներքո անձին ազատազրկելը իրավաչափ է ոչ միայն այն դեպքում, երբ անձը հասարակական կյանքի համար վտանգ է ներկայացնում, այլ նաև այն դեպքերում, երբ նման ազատազրկումը բխում է հենց այդ անձի օրինական շահերից...” (Witold Litwa v. Poland, no 26629/95, 04 դեկտեմբերի, 1998թ, կետ 75):

*Varbanov v. Bulgaria* (5 Հոկտեմբերի, 2000) 31365/96 պարբ. 47 արձանագրել է, որ “...բժշկական փորձաքննությունը պետք է հիմնված լինի անձի հոգեկան առողջության փաստացի վիճակի վրա և ոչ թե անցյալում տեղի ունեցած միջոցառումների: Անձին ազատազրկելու համար բժշկական փորձաքննությունը չի կարող բավարար համարվել, եթե այն հիմնված է եղել որոշ ժամանակ անց՝ անցյալում, տեղի ունեցած իրադարձությունների վրա...”:

Քաղաքացին 2014 թվականի հունվարի 22-ին ոստիկանության աշխատակիցների կողմից Վրաստանի Հարնարպետությունից հարկադրաբար տեղափոխվել է Հայաստանի Հանրապետության հոգեբուժական հիվանդանոց, և շուրջ 16 ժամ տևած Քոբուլեթի-Երևան ճանապարհին գտնվել է անազատության մեջ անօրինական կարգով: Ներկայացված գործողությունների, ինչպես նաև հոգեբուժարան ընդունելու համար անձը հոգեբուժական փորձաքննության չի ենթարկվել, իր վարքագծում հասարակական վտանգավորության ռիսկ չի արձանագրվել և նման կերպ հարկադիր բուժումը չի բավարարում “օրենքով սահմանված ընթացակարգին համապատասխան” պահանջին:

«Օրենքով նախատեսված ընթացակարգին համապատասխան» ազատությունից զրկվելու պահանջը չի պահպանվել նաև իրեն հոգեբուժարան ընդունելուց հետո իր հարկադիր բուժումը կազմակերպելու գործընթացում:

2014 թվականի հունվարի 23-ից մարտի 11 հոգեբուժարանում հարկադիր բուժման ենթարկելու համար բացակայել է հենց այդ պահին իր հարկադիր բուժման անհրաժեշտության վերաբերյալ հոգեբուժական հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը: Քաղաքացին 2014թվականի հունվարի 23-ին Նորքի հոգեբուժական կլինիկա ընդունվելուց հետո հոգեբուժական փորձաքննության չի ենթարկվել, այլ նրա վերաբերյալ դատարան ներկայացված միջնորդությունը հիմնավորվել է 2013 թվականի նոյեմբերի 20-ի հոգեբուժական փորձաքննության եզրակացությամբ՝ «Սուր հոգեշարժական գրգռված վիճակ»:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL  
ORGANIZATION

#### 4 Արդյունավետ պաշտպանության միջոցի բացակայությունը

Արդյունավետ պաշտպանության իրավունքը Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն արժանացրել է մեկնաբանությունների և տվել հիմնական բնութագիրը այսպես՝ ըստ Սիլվերը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռի՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի մեկնաբանության կապակցությամբ Դատարանի կողմից սահմանված սկզբունքները հետևյալն են.

1) Եթե անձը վիճարկում է Կոնվենցիայով սահմանված իրավունքների խախտման հետևանքով գոհ լինելու փաստը, ապա նա պետք է ներպետական մարմինների առջև իրավական պաշտպանության հնարավորություն ունենա, որպեսզի ն՝ իր բողոքը լուծվի, և՛ համապատասխան փոխհատուցում ստանա,

2) Մարմինները, որոնք նշված են 13-րդ հոդվածում, կարող են դատական մարմիններ չլինել, սակայն եթե դատական մարմին չեն, ապա իրենց վերապահված լիազորություններն ու երաշխիքները բավական պետք է լինեն նրանց տրամադրած իրավական պաշտպանության միջոցների արդյունավետության գնահատման համար,

3) Չնայած ոչ մի առանձին իրավական պաշտպանության միջոց չի կարող ամբողջովին բավարարել 13-րդ հոդվածի պահանջները, ներպետական իրավական պաշտպանության միջոցների համակցությունը կարող է դա ապահովել,

4) ոչ՝ 13-րդ հոդվածը, ոչ՝ էլ ամբողջ Կոնվենցիան պայմանավորվող պետությունների համար չեն սահմանում այն կարգը, որով Կոնվենցիայի ցանկացած դրույթ արդյունավետորեն կներդրվեր ներպետական օրենսդրության շրջանակներում, օրինակ՝ Կոնվենցիան ներպետական օրենսդրության մեջ ներառելու միջոցով<sup>2</sup>:

Սյորինգն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանը հայտնել էր հետևյալ դիրքորոշումը.

«13-րդ հոդվածը երաշխավորում է Կոնվենցիայով նախատեսված իրավունքների և ազատությունների իրական ապահովման համար իրավական պաշտպանություն ստանալ ազգային մակարդակով, անկախ նրանից, թե ազգային իրավական համակարգում ինչպիսի իրավական ձևով են դրանք ապահովվում: 13-րդ հոդվածը պահանջում է ներպետական այնպիսի միջոցների առկայություն, որոնք թույլ են տալիս իրավասու «պետական մարմին» և՛ Կոնվենցիայի համապատասխան հոդվածի վերաբերյալ զանգատը քննության առնել ըստ էության, և՛ համապատասխան պաշտպանություն տրամադրել<sup>3</sup>»:

Եվրոպական դատարանը իր վճռում նաև նշեց, որ, իրականացնելով դատական հսկողություն, դատարանը կարող է որոշում ընդունել այն մասին, որ գործադիր մարմնի գործողություններն իր հայեցողության սահմաններում և իրավասությանը համապատասխան,

<sup>2</sup> Silver and Others v. the United Kingdom, 25 մարտի 1983, § 113:

<sup>3</sup> ՄԻԵԴ-ի գործ, Soering v. the United Kingdom, զանգատ թիվ 14038/88, 7 հուլիսի 1989, § 120:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL  
ORGANIZATION

կարող են իրավաչափության, ողջամտության կամ ընթացակարգերի պահպանության տեսակետից այդուհանդերձ լինել ոչ անթերի:

Դատարանն ամրագրել է, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածը երաշխավորում է ներպետական մակարդակով իրավական պաշտպանության հասանելիությունը՝ ապահովելու Կոնվենցիայով նախատեսված իրավունքների և ազատությունների իրականացումը ինչ ձևով էլ որ դրանք ամրագրված լինեն ներպետական օրենսդրության մեջ: Այդպիսով, 13-րդ հոդվածը պահանջում է Կոնվենցիայի շրջանակներում ծագող վիճելի պահանջի ըստ էության քննության համար ապահովել իրավական պաշտպանության ներպետական միջոցներ և տրամադրել համապատասխան օժանդակություն, այդուամենայնիվ Պայմանավորվող պետություններն ունեն որոշակի ազատություն՝ Կոնվենցիայի վերոնշյալ դրույթի ներքո իրենց պարտավորության իրականացման ձևերը ընտրելու տեսանկյունից: 13-րդ հոդվածի ներքո պարտավորության շրջանակը տատանվում է՝ կախված Կոնվենցիայի ներքո Դիմումատուի պահանջների բնույթից: Այդուամենայնիվ, 13-րդ հոդվածով պահանջված միջոցը պետք է լինի արդյունավետ ինչպես պրակտիկայում, այնպես էլ օրենքով, մասնավորապես, այն իմաստով, որ դրա իրականացումը չպետք է անհարկի բարդեցվի պատասխանող պետության իշխանությունների գործողությունների կամ անգործության պատճառով<sup>4</sup>:

#### 4.1 Խնդիր 1

##### **Կյանքի իրավունքի խախտման ժամանակ տուժողի իրավահաջորդի արդյունավետ պաշտպանության միջոցի բացակայությունը**

Քաղաքացու որդին մահացել է զորամասում՝ ատրճանակի կրակոցից այն ժամանակ, երբ հրամանատարը վերջինիս և մի շարք այլ զինծառայողների պատժելու նպատակով պարտավորեցրել է կատարել մի շարք վաժություններ: Ընդհանուր իրավասության դատարանը գտել է, որ մահացած զինծառայողը ինքնասպան է եղել:

Քրեական գործով որպես մահացած զինվորի իրավահաջորդ հանդես է եկել վերջինիս հայրը: Քանի որ դատական նիստերը տեղի են ունեցել Սյունիքի մարզում, իսկ հայրը հանդիսացել է Արմավիրի մարզի բնակիչ, վերջինս չի կարողացել մասնակցել դատական նիստերի:

Դատավճիռը հրապարակվելուց հետո տուժողի իրավահաջորդին դատավճիռը չի ուղարկվել, քանի որ օրենքով վերջինս կողմ չի ճանաչվել: Դատավճիռը վերջինիս հասանելի է դարձել այն ժամանակ, երբ բողոքարկման համար նախատեսված ժամկետը բաց է թողնվել: Նա դիմում է ներկայացրել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանին՝ բաց

<sup>4</sup> ՄԻԵԴ-ի գործեր, Aksoy v. Turkey, զանգատ թից 21987/93, 18 դեկտեմբերի 1996, § 95; Aydın v. Turkey զանգատ թիվ 57/1996/676/866, 25 սեպտեմբերի 1997, կետ § 103; և Kaya v. Turkey զանգատ թիվ 158/1996/777/978, 19 Փետրվարի 1998, § 106:





ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL  
ORGANIZATION

թողնված դատական ժամկետները հարգելի համարելու մասին, որը մերժվել է:

Տուժողը միևնույն է ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը թողնվել է առանց քննության՝ ժամկետները բաց թողնված լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ քր.դատ.օր-ի 375-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին դատավճռի պատճենն <...> հանձնվում է նրանց միջնորդությամբ»:

Մինչդեռ, քրեական դատավարության մնացյալ կողմերին դատական ակտն ուղարկվում է պարտադիր կարգով: Այստեղ հարց է առաջանում, թե որքանով են պաշտպանված տուժողի դատավարական իրավունքներն, քանի որ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 1985 թվականին ընդունված «Տուժողի դերը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» N R(85) 11 հանձնարարականի նախաբանում հատուկ ընդգծվել է, որ այն ընդունվել է՝ ելնելով այն հանգամանքից, որ քրեական արդարադատության նպատակները ավանդաբար ձևակերպվել են պետության և իրավախախտի միջև հարաբերությունների տիրույթում, ինչի արդյունքում այդ համակարգի գործառույթը հաճախ բարդացնում է տուժողի մոտ ծագած խնդիրները, այլ ոչ թե նպաստում դրանց լուծմանը: Մինչդեռ քրեական արդարադատության հիմնական գործառույթը պետք է լինի տուժողի պահանջները բավարարելը և շահերը պաշտպանելը:

Նման պայմաններում, Քր.դատ. օր-ի վերոնշյալ դրույթի պատճառով տուժողի իրավահաջորդը գրկվել է դատական ակտը բողոքարկելու իրավունքից, որի հետևանքով էլ իր որդու կյանքի իրավունքի խախտման փաստը արդյունավետ քննության չի արժանացել: Բացի այդ, դատավճռով դատարանը հայտարարել է, որը զինվորը ինքնասպան է եղել հոգեկան խնդիրներ ունենալու պատճառով: Սա, կարծում ենք խախտում է նաև այդ անձի անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը, որը պաշտպանվում է ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածով:

#### 4.2 Խնդիր 2 Վճռի կատարման անհնարինություն

2012թ. երկու քաղաքացիներ դատապարտվել են նրա համար, որ հանդիսանալով N ընկերության տնօրեն և բաժնետեր, նախնական համաձայնության գալով, իրեն պաշտոնական դիրքն օգտագործելով չարաշահել են մյուս բաժնետերերի վստահությունը պատրաստել են կազմակերպությանը պատկանող շինությունների նվիրատվության կեղծ փաստաթղթեր, որի հետևանքով բաժնետերերին պատճառել են առանձնապես խոշոր չափերի նյութական վնաս: Տուժող բաժնետերերը եղել են տասից ավել տարեց քաղաքացիներ, ովքեր ունեն առողջական խնդիրներ:

Տուժողները ներկայացրել էին նաև քաղաքացիական հայց, որը բավարարվել էր: Կատարողական թերթը ներկայացվել էր կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությանը, որը վարույթը ավարտել էր՝ պարտապաններից մեկի գտնվելու վայրը անհայտ լինելու պատճառաբանությամբ:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL  
ORGANIZATION

Տուժողները ձեռնարկել են տարբեր միջոցներ, մասնավորապես՝ այդ պարտապանին անհայտ բացակայող ճանաչելու հայցով դիմել էին դատարան, խնդիրը փորձել էին լուծել Մարդու իրավունքների պաշտպանի /ՄԻՊ-ի/ միջոցով, սակայն ապարդյուն:

Այդ ընթացքում քաղաքացիներից մի քանիսը առողջական խնդիրների պատճառով մահացել են:

Տարածելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնաբանությունները սույն գործի փաստական հանգամանքների վրա՝ կարծում ենք, որ գործով տեղի է ունեցել Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համակցությամբ:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը պետք է ապահովի անձի իրավունքների արդյունավետ միջոցի պաշտպանությունը: Նման պայմաններում դատարանի վճռի առկայությունը չի կարող համարվել, որ տուժողների իրավունքները վերականգնվել են, քանի որ այդ վճիռը դեռ չի կատարվել և բացակայում է որևէ միջոց՝ խախտված իրավունքները վերականգնելու համար:

## **5 Առողջության իրավունքի խախտման դեպքում արդյունավետ քննության իրավունքը**

Անձի առողջության իրավունքը ՄԻԵԴ-ի նախադեպերով պաշտպանության է արժանանում կյանքի իրավունքի պաշտպանության ներքո և դրա նկատմամբ կիրառում ենք կյանքի իրավունքի խախտման համար սահմանված արդյունքվետ քննության չափանիշները: Մասնավորապես, կյանքի իրավունքի, այդ թվում նաև առողջության իրավունքի խախտման քննությունը որպեսզի համարվի արդյունավետ, ապա պետք է պարզել, թե արդյոք քննությունը եղել է անկախ և բավարարել է Կոնվենցիայով առաջադրված բոլոր պահանջները: Մասնավորապես՝ քննությունը պետք է երաշխավորի, որ առողջական վիճակի վերաբերյալ բոլոր գրառումները, վկաների հարցաքննությունը և առնչվող տեղեկատվությունը ձեռք է բերվել անաչառության սկզբունքի պահպանմամբ: Մա ենթադրում է, որ քննությունը չպետք է հիմնվի բացառապես նույն հիվանդանոցի կամ շրջանի բժիշկների կողմից հաղորդած տեղեկատվության վրա:

Բժշկական անփութություն անձի առողջության վնաս է պատճառվել, ինչի հետևանքով նա հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել: Քրեական գործի վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով:

Քննիչը քրեական գործի շրջանակներում չի ապահովել գործի արդյունավետ քննության սկզբունքը, քանի որ չի պարզել մի շարք հանգամանքներ: Մասնավորապես, այն, որ վիրահատություն կատարած բժիշկը իրավունք չունի կատարելու նման վիրահատություն: Բացի այդ, դատաբժշկական փորձաքննություն իրականացնելիս փորձագետներին չի հայտնել, որ հիվանդը դուրս գրվելուց հետո եղել է բժշկի վերահսկողության տակ և որ այդ ժամանակ վիրակապումները կատարվել են բժշկի կողմից:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL  
ORGANIZATION

Հաշվի առնելով ՄԻԵԴ-ի մի շարք նախադեպային որոշումներում<sup>5</sup> ամրագրված պահանջները, և որպես ներպետական օրենսդրության մեջ ամրագրված կարգավորումներ<sup>6</sup> և դատարանում բողոքի քննության ժամանակ ներկայացնելով մի շարք ապացույցներ, որ քննիչը բազմակողմանի քննություն չի իրականացվել, խնդրվել է վերացնել քննիչի՝ «Քրեական գործի վարույթը կասեցնելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը»:

**ՀՀ վերաքննիչ դատարանը որոշումը բավարարել է և այդ որոշման հիման վրա քրեական գործը վերսկսվել է:**

## 6 ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ/ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեն CM/Rec(2007)7 Հանձնարարականի շրջանակներում սահմանում է արդյունավետ վարչարարության հիմնական սկզբունքները, որոնց հիման վրա ձևավորվում է վարչական մարմինների գործունեության արդյունավետությունը: Այն հիմնականում ներառում է՝

- Իրավաչափության,
- Հավասարության,
- Անաչառության,
- Համաչափության,
- Իրավական որոշակիության և այլ սկզբունքներ<sup>7</sup>:

Լավ կառավարման կամ արդյունավետ վարչարարության սկզբունքները պայմանավորված են վարչական մարմնի կառուցվածքի և կառավարման որակով, որը պետք է համապատասխանի արդյունավետության պահանջին և տվյալ հասարակության հիմնական կարիքներին<sup>8</sup>:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը մասնակիորեն է արտացոլում այս սկզբունքները և վարչական մարմինների գործունեության արդյունավետության տեսանկյունից առավելագույն արդյունքների չի հասցնում:

Օրենքով սահմանված վարչարարության հիմնական սկզբունքերն են.

<sup>5</sup> ՄԻԵԴ-ի որոշումներ՝ թիվ 41108/10 գանգատ՝ Բաջիկն ընդդեմ Խորվաթիայի (Case Of Bajić V. Croatia), կետ 93, 95, 103; Կսոման ընդդեմ Ռումինիայի (Csoma V. Romania), կետ 42 և մի շարք որոշումներ, որտեղ առողջության իրավունքը պաշտպանվում է 8-րդ հոդվածի ներքո

<sup>6</sup> Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի օրենսգրքի 7-րդ, 17-րդ, 25-րդ, 35-րդ, 124-րդ, 126-րդ և 127-րդ հոդվածները

<sup>7</sup> Recommendation CM/Rec(2007)7 of the Committee of Ministers to member states on good administration

<sup>8</sup> LASZLO SZEGEDI, ON THE COUNCIL OF EUROPE'S RECOMMENDATION ON GOOD

ADMINISTRATION, <http://www.propublicobono.hu/pdf/7%20Szegedi%20I%20Good%20Administration.pdf>



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL  
ORGANIZATION

Վարչարարության օրինականություն, ձևական պահանջները չարաշահելու արգելք, կամայականության արդգելք, հավաստիության կանխավարկած և այլն:

Վարչական մարմնի գործունեության արդյունավետության պահանջը ենթադրում է, որ քաղաքացիների հետ հարաբերություններում վարչական մարմինը պետք է հնարավորինս բացառի քաղաքացուց այնպիսի տեղեկություններ պահանջելը, որոնց ձեռքբերման իրավասությամբ ինքն օժտված է, և որն առավելագույնս սեղմ ժամկետում կապահովի քաղաքացու խնդրի լուծումը: Այնուամենայնիվ, վարչական մարմինների պրակտիկան վկայում է, որ արդյունավետ կառավարման սկզբունքները վարչական մարմինների կողմից չեն պահպանվում և խախտվում է լավ կառավարման/արդյունավետ վարչարարության իրավունքը, որն էլ իր հերթին հանգեցնում է այլ իրավունքների խախտումների:

**6.1 Ոստիկանության գործունեության ոլորտում լավ կառավարման/արդյունավետ վարչարարության իրավունքի խախտումներ**

**6.2 Երեխային քաղաքացիություն չունեցող անձի վկայական տրամադրելու մասով**

2014 թվականի հունվարից կազմակերպությունը դիմել է ՀՀ ոստիկանություն՝ ՀՀ տարածքում ՀՀ քաղաքացիություն չունեցող անձից ծնված երեխային համապատասխան փաստաթղթեր տրամադրելու խնդրանքով:

Խնդիրը կայացել է նրանում, որ համապատասխան փաստաթղթերի բացակայության դեպքում մայրը չէր կարող երեխային հանրապետությունից դուրս տանել, իսկ քանի որ լեզվին չէր տիրապետում, չէր կարող նաև ՀՀ տարածքում աշխատել և հոգալ իր և երեխայի կենսական ծախսերը:

ՀՀ Ոստիկանության Անձնագրերի և վիզաների վարչություն մեկ տարվա ընթացքում կազմակերպությունից պահանջել է տարբեր տեղեկություններ և փաստաթղթեր այն դեպքում, երբ այդ տեղեկություններն արդեն արձանագրված են եղել պետական այլ մարմինների կողմից և ԱՎՎ կարող էր դրանք ավելի սեղմ ժամկետներում իր նախաձեռնությամբ պահանջել և ստանալ: Օրինակ՝ երեխայի ծննդյան փաստի վերաբերյալ գրառում է առկա եղել Քաղաքացիական կացության Գրանցման Մարմնում, որտեղ նշվել է երեխայի հոր անունը, քաղաքացիությունը, երեխայի հոր վերաբերյալ տեղեկություններ են գրանցվել նաև ՀՀ սահմանային անցակետում, երբ երեխայի հայրը դուրս է եկել ՀՀ տարածքից:

Ընդ որում, ԱՎՎ-ի կողմի նման տեղեկատվություն ներկայացնելու պահանջը առաջադրվել է ոչ թե ամբողջական ցանկով մեկ գրությամբ, այլ յուրաքանչյուր անգամ կազմակերպության կողմից ձեռք բերված և ներկայացված տեղեկատվությանն ի հավելում խնդրի լուծման համար ներկայացվել է այլ փաստաթղթի պահանջ:

Երեխայի մայրը ստիպված է եղել երեխային հանձնել մանկատուն և միայնակ դուրս գալ Հայաստանի Հանրապետությունից:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL  
ORGANIZATION

Ներկայումս, թեև կազմակերպության կողմից արդեն հավաքվել է անհրաժեշտ տեղեկատվության և փաստերի ամբողջական փաթեթը, այնուամենայնիվ, երեխային դեռևս համապատասխան փաստաթղթեր չեն տրամադրվել:

### 6.3 Չափահաս անձին ծննդյան վկայական տրամադրելու մասով

Այս գործով կազմակերպությունը դիմել է Քաղաքացիական Կացության Ակտերի Գրանցման Մարմին՝ չափահաս անձի ծննդյան փաստը գրանցելու խնդրանքով: Ստանալով մերժում՝ կազմակերպությունը դիմել է դատարան՝ դատական կարգով անձի անուն, ազգանուն և հայրանունը, անձի ծննդյան գրանցման փաստը հաստատելու խնդրանքով: Դատարանը դիմումը բավարարել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անձը ՀՀ օրենսդրության սահմանված կարգով այլ կերպ չի կարող հաստատել իր ծննդյան գրանցման փաստը:

Այնուամենայնիվ, Քաղաքացիության կացության ակտերի գրանցման գործակալությունը հրաժարվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա չափահաս անձի դիմումի հիման վրա գրանցել վերջինիս ծննդյան փաստը՝ հիմնավորելով, որ քանի դեռ այդ անձի հայրությունը չի հաստատվել, նա չի կարող կրել իր հայրական ազգանունը:

### 6.4 ՀՀ ֆինանսների նախարարության գործողությունների մասով

Կազմակերպությանը անվճար իրավական խորհրդատվության շրջանակներում պարբերաբար դիմում են քաղաքացիներ, ովքեր բողոքում են հարկային տեսուչների գործողությունների դեմ, ինչպես և ՀՀ ֆինանսների նախարարության գործողությունների դեմ:

Հարկային ծառայողների գործողությունների վերաբերյալ կան մի շարք դրույթներ, որոնց կարելի է հղում կատարել հարկային տեսուչի գործողությունների ոչ իրավաչափությունը հիմնավորելու համար:

Մասնավորապես,

Հարկային ծառայության մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված են հարկային ծառայության կազմակերպման սկզբունքները, որոնցից առաջինն է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքի գերակայությունը, մարդու իրավունքների և ազատությունների առաջնայնությունը (Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետ):

Հարկային ծառայության սկզբունքների շարքում են նաև քաղաքացիների համար հարկային ծառայության հավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան, ինչպես նաև հարկային ծառայողների պատասխանատվությունը՝ իրենց ծառայողական պարտականությունները



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL  
ORGANIZATION

**չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար (Օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ կետերը):**

Օրենքի 39-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ կետերի համաձայն՝ հարկային ծառայողի պարտականություններն են նաև հարկ վճարողների, նրանց ներկայացուցիչների և հարկային հարաբերությունների այլ մասնակիցների նկատմամբ պատասխանատու և ուշադիր վերաբերմունքի ցուցաբերումը, ինչպես նաև հարկային ծառայության գործառույթների և հարկային ծառայողի վարքագծի կանոնների պահանջներով խստագույնս առաջնորդվելը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր նախադեպային որոշումների մեջ անդրադառնալով պետական մարմինների կողմից հարկային և մաքսային ոլորտում անձանց սեփականության նկատմամբ վերահսկողության հարցին՝ և ուսումնասիրելով այդ գործերը Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերության ներքո («սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն (control of use of property)» նշել է, որ Պետության կողմից վերահսկողությունը համարվում է իրավաչափ, եթե դա օրինական է և համաչափ (պետք է պահպանվի արդարացի հավասարակշռությունը սեփականության իրավունքի և հասարակության շահերի միջև)<sup>9</sup>:

ՄԻԵԴ-ը իր նախադեպային որոշումների մեջ նշել է, որ այնքանով, որքանով դա վերաբերելի է հարկային ոլորտին, հաշվի առնելով այդ ոլորտի օրենսդրական կարգավորման բարդությունը, կարող է որոշ դեպքերում անհրաժեշտություն առաջանալ, որպեսզի այդ ոլորտում խորհրդատվություն տրամադրող իրավասու մարմինները դիմողների հարցերին մոտենան լրացուցիչ զգուշությամբ և ջանասիրությամբ<sup>10</sup>:

**Ներկայումս կազմակերպության աջակցությամբ ՀՀ վարչական դատարանի կողմից բավարարվել են երկու հայցեր (ՎԴ/7017/05/11 և թիվ ՎԴ/5428/05/14), որտեղ Ա/2 գրանցված անձինք վիճարկում էին ՀՀ ֆինանսների նեխարարության կողմից ներկայացված պահանջների իրավաչափությունը:**

#### 6.4.1 Խնդիր 1

Անհատ ձեռնարկատեր գրանցված քաղաքացիները բողոքում են նրանից, որ տարիներ առաջ նրանք փաստացի դադարեցրել էին իրենց ձեռնարկատիրական գործունեությունը, սակայն չէին հանձնել անհատ ձեռներեցի վկայականը:

Քաղաքացիները բողոքում են, որ այն պատճառով, որ վերջիններս ձեռնարկատիրական գործունեությունը սկսելուց առաջ պատշաճ կարգով չէին ծանոթացել իրենց իրավունքների և պարտականությունների մասին: Մասնավորապես, քաղաքացիներին պատշաճ տեղեկացում էին ՀԴՄ ձեռք բերելու, ՀԴՄ կտրոնը չխփելու դեպքում առաջացող պատասխանատվության, համապատասխան վճարումներ կատարելու և այլ պարտականությունների մասին: Սակայն դրա հետ մեկտեղ ձեռնարկատիրական

<sup>9</sup> ՄԻԵԴ-ի վճիռներ. East West Alliance limited v. Ukraine, զանգատ թիվ 19336/04, 03.02.2014, §§ 193-195; Gasus Dosier- und Fördertechnik GmbH v. The Netherlands, զանգատ թիվ 15375/89, 23.02.1995, § 54:

<sup>10</sup> ՄԻԵԴ-ի վճիռ Spacek, SRO v. Check Republic, զանգատ թիվ. 26449/95, § 59, 9 նոյեմբերի 1999 թ.:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL  
ORGANIZATION

գործունեությունը դադարեցնելու կամ կասեցնելու ընթացակարգի մասին քաղաքացիները չէին տեղեկացվում:

Ձեռնարկատիրական գործունեությունը դադարեցնելուց հետո հարկային տեսուչները նրանց հետ որևէ կերպ կապ չեն հաստատել, չնայած որ մինչ այդ յուրաքանչյուր տարի գրեթե նույն օրը հարկային տեսուչները կատարում էին այցելություններ, որի մասին կազմվում էին համապատասխան արձանագրություններ: Ընդ որում, քաղաքացիների հարկային գործերի մեջ առկա չէ որևէ փաստաթուղթ, որը կհաստատեր, որ հարկային տեսուչը, անձի կողմից փաստացի ձեռնարկատիրական գործունեությունը դադարեցնելուց հետո այցելել է քաղաքացու ձեռնարկատիրական գործունեության կատարման վայրը, կամ փորձել է իրականացնել ստուգումներ, սակայն չի կարողացել, քանի որ այդ տաղավարը փակ է եղել:

Ընդ որում, ՀՀ ֆինանսների նախարարությունը անհատ ձեռնարկատեր գրանցված անձանց չվճարված հարկային պարտավորությունների մասին տեղեկացնում է պարտքերի գոյացման ժամանակահատվածից 3-10 տարի անց:

Այսպես, հարց է առաջանում, թե ինչո՞վ է պայմանավորված այն հանգամանքը, որ անձի հարկային գործի մեջ բացակայում են որևէ տեղեկություններ հարկային տեսուչի կողմից ձեռնարկատիրական գործունեությունը դադարեցնելու ժամանակահատվածից հետո կատարված ստուգումների և այցելությունների մասին:

Արդյ՞՞նք հարկային մարմինները դիտավորություն չեն դրսևորում 3 և ավելի տարիներ քաղաքացուն տույժի ենթարկելու մասին որոշման հետ չծանոթացնելով և արդյոք այս միջոցով քաղաքացու կողմից չկատարած պարտավորությունների հիմքով առավել մեծ չափի գումարի մուտքը ՀՀ պետական բյուջե ապահովելը չէ:

Խնդիր է նաև այն, որ հարկային պարտավորությունները չկատարելու դեպքում հարկային մարմնի (ՀՀ ֆինանսների նախարարության) կողմից գումարային պահանջներ ներկայացնելու համար սահմանված չեն որևէ հայցային վաղեմության ժամկետներ:

ՀՀ վճռաբեկ դատարանն, իր որոշումների մեջ անդրադառնալով Հարկերի մասին ՀՀ օրենքի 30.1 հոդվածի մեկնաբանությանը, նշել է, որ «հարկատուի մոտ հարկային պարտավորություններ չեն առաջանում, եթե վերջինիս կողմից թույլ տրված հարկային օրենսդրության խախտումը դրան հաջորդող երեք տարիների ընթացքում հարկային մարմնի կողմից չի հայտնաբերվել: Տույժի հաշվարկը բավարար հիմք է արձանագրելու համար, որ թույլ տրված խախտումը ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կողմից հայտնաբերվել է դեռևս խախտման առաջին օրը» (տե՛ս ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Շահումյանի հարկային տեսչության ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գայանե Ադյանի՝ 4.955.100 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, թիվ 3-1150 (ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.08.2007թ. որոշումը):



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL  
ORGANIZATION

#### 6.4.2 Խնդիր 2

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արդյունքում գնումների համար ՀԴՄ կտրոն չխփելու դեպքում անձինք ենթարկվում են այնպիսի տուգանքների, որոնք երբեմն գերազանցում են այդ անձանց կողմից ձեռք բերվող ամսական եկամտի չափը: Ընդ որում, օրենսդրությունը չի տարանջատում մանր, միջին և խոշոր բիզնեսով զբաղվող անձանց տուգանքի չափերը, ինչից հետևություն ենք անում, որ օրենքը մանր բիզնեսով զբաղվող անձանդ խրախուսելու փոխարեն իր գործողություններով բերում է նրան, որ այդ անձինք սնանկանում են կամ նախընտրում են դադարեցնել ձեռնարկատիրական գործունեությունը:

#### 6.4.3 Խնդիր 3

Մաքսային իրավահարաբերությունների շրջանակներում քաղաքացիները նույնպես չեն արժանանում պատշաճ տեղեկատվության տրամադրմանը ինչպես մաքսային ծառայողների, այնպես էլ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, ինչի հետևանքով քաղաքացիները ենթարկվում են տուգանքների, որոնք նույնպես կազմում են բավականին խոշոր գումարներ:

Այստեղ երբեմն հարց է առաջանում, թե որքանով է համաչափ տուգանքը (որը փաստացի պատիժ է) կատարված խախտմանը:

ՄԻԵԴ-ը իր նախադեպային որոշումների մեջ նշել է, որ անձի վարքագիծը հարկային պարտավորությունների ոլորտում նույնպես մեծ նշանակություն ունի Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում արձանագրելու համար: Այն դեպքում երբ հարկային իրավահարաբերություններում քաղաքացին քայլեր է ձեռնարկում իր շահերի պաշտպանության համար, Դատարանը արձանագրում է, որ վերջինս ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները պատիժը մեղմացնելու համար<sup>11</sup>:

#### 6.5 Օրենքի սխալ մեկնաբանման մասով

Երբեմն վարչական մարմինները իրենց լիազորությունների շրջանակներում օրենքը սխալ են մեկնաբանում, ինչի հետևանքով խախտվում են քաղաքացիների իրավունքները:

Նման դեպքերի օրինակ է հանդիսանում ՀՀ ՖՆ-ի կողմից քաղաքացու դիմումը ՀՀ վճռաբեկ դատարանի համար վճարված պետական տուրքի վերադարձնելու վերաբերյալ մերժելն է:

Կազմակերպությանը դիմած քաղաքացու համար կազմվել էր հայցադիմում՝ ընդդեմ ՀՀ Ֆինանսների նախարարությանը վճարված պետական տուրքի գումարը վերադարձնելու պահանջի մասին:

<sup>11</sup> ՄԻԵԴ-ի վճիռ [Spacek](#), SRO գանգատ թիվ. 26449/95, § 59, 9 նոյեմբերի 1999 թ.





## **ՀՀ վարչական դատարանը հայցադիմումը բավարարել է և հայտնել է հետևյալը.**

- ՀՀ ֆինանսների նախարարությունն իրավասու չէ մերժելու պետական տուրքի վերադարձը՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի հիման վրա, այդ թվում՝ այդ նորմի այս կամ այն խմբագրությամբ կիրառելիության հիմնավորմամբ:

- ՀՀ ֆինանսների նախարարությունն իրավասու է վճռաբեկ բողոք ներկայացնելու համար գանձված պետական տուրքի վերադարձը մերժելու միայն այն դեպքում, երբ բողոք բերող անձի կողմից բավարարված չեն օրենքի 39-րդ հոդվածի պահանջները, այդ թվում՝ ներկայացված չեն այդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված փաստաթղթերը: Այդ փաստաթղթերի առկայության պայմաններում այլևս քննարկման առարկա չի կարող դառնալ<sup>12</sup>:

### **6.6 Կենսաթոշակի հաշվարկի մասով**

Սոցիալական ապահովության պետական ծառայությունը՝ հանդիսանալով այն վարչական մարմինը, որը նշանակում և հաշվարկում է կենսաթոշակը, քաղաքացու գործով սխալ է հաշվարկել կենսաթոշակը այն պատճառով, որ չի կիրառել այն օրենքը, որը պետք է կիրառեր: Ընդ որում, ի պատասխան անձի կողմից ներկայացվող բողոքներին, նա որպես հիմնավորում նշել է այլ հանգամանքներ, որոնք որևէ կերպ չէին ապացուցվել վարչական մարմնի կողմից:

Կրկին, այստեղ առկա է վարչական մարմնի կողմից անձին ոչ պատշաճ տեղեկություն տրամադրելու հանգամանքը, որի արդյունքում նա հայտնվել է մոլորության մեջ: Ընդ որում, վարչական մարմինը ոչ միայն սխալ տեղեկություն է տրամադրել, այլ սխալ է մեկնաբանել այն օրենքը, որը պետք է կիրառվեր: Արդյունքում խախտվել է անձի՝ Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով օժտված իրավունքը:

### **6.7 Դատական ակտերի հարկադիր կատարման գործողությունների մասով**

Դատական ակտերի հարկադիր կատարումն արգելանք է դրել քաղաքացու բանկային հաշիվների վրա, չնայած որ վերջինս կատարողական վարույթով պարտապան չի հանդիսացել: Բացի այդ, արգելափակվել են անձի վարկային հաշիվները: Քաղաքացին, բնականաբար, չի կարողացել կատարել իր վարկային պարտավորությունները, ինչի հետևանքով նրա պայմանագրերը լուծվել են և բանկերը գումարի բռնագանձման պահանջով դիմել են դատարան:

ԴԱՀԿ-ն չունի իրավունք արգելափակելու անձի բանկային հաշիվներ, ով կատարողական վարույթով պարտապան չի հանդիսացել: Ավելին՝ արգելանքի տակ են դրվել թվով 4 բանկային հաշիվներ, ընդ որում, բոլորը բացվել էին վարկային պարտավորությունները մարելու համար: Որպես հետևանք, այն անձը, որ փաստացի եղել է անմեղ, վերջինիս պապատճառով կրել է զգալի չափով վնասներ: Սա կրկին հանդիսանում է

<sup>12</sup> Գործի մանրամասն նկարագրությունը տե՛ս «ՀՀ ֆինանսների նախարարությունը իրավասու չէ մերժելու պետական տուրքի վերադարձը», <http://www.prwb.am/hy/node/580>



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL  
ORGANIZATION

Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում, որը տեղի է ունեցել ոչ արդյունավետ վարչարարության հետևանքով: